ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«01» 09 2025թ. ՆՄՈ/818-Ա

ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 19-Ի ՆՄՈ/620-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 13-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով և 34-րդ հոդվածի 1-ին մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Արմավիրի մարզային փրկարարական վարչության պետի պարտականությունները ժամանակավորապես կատարողի 2025 թվականի օգոստոսի 26-ի N95/11-246 գրությունը.

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2022 թվականի հոկտեմբերի 19-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի բնակչության, նյութական և մշակութային արժեքների տարահանման նոր պլանը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2015 թվականի փետրվարի 12-ի N31 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՆՄՈ/684-Ա որոշման մեջ կատարել հետևյալ լրացումը՝

1) որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 1-ին բաժնի 1-ին կետում «ստեղծված արտակարգ իրավիճակներում մարզի բնակչության» բառերից հետո լրացնել «, նյութական և մշակութային արժեքների» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ,
ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝

Восстановимая подпись

X

Подписано: NIKOGHOSYAN BARSEGH 2808860099 **Բ. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ**